ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«28» դեկտեմբեր - ի 2021 թվականի N 78-Ա

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 28-ի թիվ 12 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Գյուլզադյան Վռամ		—	—	—
Թորոսյան Հրայր	—	—	—	բացակա
Լալազարյան Կարեն		—	—	—
Հարությունյան Հայկ	—	—	—	բացակա
Մագթաղյան Գնել	—	—	—	բացակա
Մարիկյան Արմեն		—	—	
Մկրտումյան Խալաթ	—	—	—	բացակա
Մուրադյան Դավիթ		—	—	—
Նալբանդյան Վահե		—	—	—
Սարգսյան Աիդա		—	—	—
Օհանյան Ստեփան		—	—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ /Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու
2021թ. դեկտեմբերի 28-ի թիվ 78-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

28.12.2021թ. գ. Գյուլագարակ

1.Գյուլագարակ համայնքի ավագանու 2021թ դեկտեմբերի 28-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին:
3.Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին:
4.Գյուլագարակ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը հաստատելու մասին:
6.Գյուլագարակ համայնքի 2022թվականի տարեկան բյուջեի նախագիծը հաստատելու մասին:

Այլ հարցեր
** Բնակավայրերում տեսախցիկներ տեղադրելու վերաբերյալ*
** 06-013-0021-0005 և 06-013-0021-0004 կադաստրային ծածկագրերի հողամասերը օտարելու վերաբերյալ*
** 06-027-0122-0001 ծածկագրից 0,00557հա, 06-027-0122-0001 ծածկագրից 1,08288հա, 06-027-0104-0128 ծածկագրի 0,00500 հա հողամասերի վերաբերյալ*
**Կուրթանի մանկապարտեզի շենքը անհատույց վարձակալության իրավունքով մանկապարտեզին տրամադրելու վերաբերյալ*
**06-057-0146-0002 ծածկագրի հողամասը համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելու մասին*
**06-057-0113-0010 ծածկագրի հողամասը վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ*

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ /ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«28» դեկտեմբերի 2021 թվականի N 79-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 17-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից
   ա/ նորածիններ ունեցող ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն թիվ 01 հավելվածի,
   բ/ հարազատին կորցրած ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն թիվ 02 հավելվածի,
   գ/ սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն թիվ 03 հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Գյուլզադյան Վռամ		—	—	—
Թորոսյան Հրայր	—	—	—	բացակա
Լալազարյան Կարեն		—	—	—
Հարությունյան Հայկ	—	—	—	բացակա
Մագթաղյան Գնել	—	—	—	բացակա
Մարիկյան Արմեն		—	—	—
Մկրտումյան Խալաթ	—	—	—	բացակա
Մուրադյան Դավիթ		—	—	—
Նալբանդյան Վահե		—	—	—
Սարգսյան Աիդա		—	—	—
Օհանյան Ստեփան	—	—	—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված թիվ 01
ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2021 թվականի դեկտեմբերի 28- Ի թիվ 79 --Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՆՈՐԱԾԻՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն , Անուն	բնակավայր	Գումարի չափը/ՀՀ դրամ/
1	Վարդանյան Վանիկ	Վարդաբլուր	քսան հազար
2	Մխիթարյան Ռոմա	Վարդաբլուր	քսան հազար
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 40000 /ՔԱՌԱՍՈՒՆ ՀԱԶԱՐ/ ՀՀ ԴՐԱՄ			

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված թիվ 02
ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2021թվականի դեկտեմբերի 28-Ի թիվ 79--Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն Անուն	բնակավայր	գումարի չափը/ՀՀ դրամ/
1	Սահակյան Սոս	*Գարգառ*	երեսուն հազար
2	Սահակյան Սուսաննա	*Գարգառ*	երեսուն հազար
3	Սուքիասյան Արթուր	Գյուլագարակ	երեսուն հազար
4	Սուքիասյան Վահագն	Գյուլագարակ	երեսուն հազար
5	Մակյան Աննա	Ամրակից	երեսուն հազար
6	Ասրյան Սամվել	Հոբարձի	երեսուն հազար
7	Ներկարարյան Ալինա	Կուրթան	երեսուն հազար
8	Դանիելյան Սուրեն	Կուրթան	երեսուն հազար
9	Գյուլզադյան Գագիկ	Վարդաբլուր	երեսուն հազար
10	Վարդանյան Միշա	Վարդաբլուր	երեսուն հազար
11	Պապոյան Հրաչյա	Վարդաբլուր	երեսուն հազար
ԸՆԴԱՄԵՆԸ ՝ 330000 /ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆ ՀԱԶԱՐ/ ՀՀ ԴՐԱՄ			

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված 03
ՀՀ Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2021թվականի դեկտեմբերի 28 ի թիվ 79 -Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն Անուն	բնակավայր	գումարի չափը/ՀՀ դրամ/
1	Չախոյան Սոփի	Գյուլագարակ	Հիսուն հազար
2	Թումանյան Էդվարդ	Վարդաբուր	Հիսուն հազար
3	Հովսեփյան Լիդա	Գյուլագարակ	Քառասուն հազար
4	Այվազյան Գագիկ	Գյուլագարակ	Քառասուն հազար
5	Մացակյան Ալինա	Գյուլագարակ	Քառասուն հազար
6	Զոհրաբյան Գայանե	Կուրթան	Քսան հազար
7	Վարդանյան Արշակ	Գյուլագարակ	Քառասուն հազար
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆ ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ			

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«28» դեկտեմբերի 2021 թվականի N 80-Ա

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012թ. հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշումը, համայնքի բնակիչների դիմումները՝ հողի հարկի տույժերը և գույքահարկը զիջելու մասին, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Կիրառել

1. Հողի հարկի գոյացած տույժերի արտոնություններ կուտակված ապառքը ամբողջությամբ և միանգամից մարած բնակիչներին, ինչպես նաև գույքահարկի արտոնություն մեկ բնակչի համաձայն թիվ 01 հավելվածի:
2. Գույքահարկի արտոնություն համաձայն թիվ 02 հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Ծանոթություն
Գյուլզադյան Վռամ		—	—	—
Թորոսյան Հրայր	—	—	—	բացակա
Լալազարյան Կարեն		—	—	—
Հարությունյան Հայկ	—	—	—	բացակա
Մագթաղյան Գնել	—	—	—	բացակա
Մարիկյան Արմեն		—	—	—
Մկրտումյան Խալաթ	—	—	—	բացակա
Մուրադյան Դավիթ		—	—	—
Նալբանդյան Վահե		—	—	—
Սարգսյան Աիդա		—	—	—
Օհանյան Ստեփան	—	—	—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված թիվ 01
Գյուլագարակ համայնքի ավագանու
2021թ. դեկտեմբերի « 28 » -ի թիվ 80-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ

Հ/Հ	Հարկ վճարողի ազգանուն անուն	գույքի գրանցման հասցե	ՀՎՀՀ կամ գույքի ծածկագիր	Արտոնության տեսակը	Արտոնության գումարի չափը /դրամ/
1	Անիկ Խարազյան	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ. Կուրթան	18325032	Հողի հարկի տույժի	25716
2	Սրապ Գյուլզադյան	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ. Վարդաբլուր	18195437	Հողի հարկի տույժի	95012
3	Անահիտ Նիկողոսյան	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ. Վարդաբլուր	18282912	Հողի հարկի տույժի	44086
4	Սամվել Շահինյան	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ.Գյուլագարակ	18189675	Հողի հարկի տույժի	36513
5	Ժիրայր Գոքորյան	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ.Գյուլագարակ	18200923	Հողի հարկի տույժի	45068
6	Արծրունի Գրգորյան	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ. Վարդաբլուր	18173082	Հողի հարկի տույժի	74837
7	Մարիամ Պողոսյան	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ. Վարդաբլուր	S0370183	Հողի հարկի տույժի	34783
8	Ֆլորա Սարգսյան	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ. Վարդաբլուր	19321332	Հողի հարկի տույժի	29233
9	Արծրուն Կիրակոսյան	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ. Կուրթան	18326283	Հողի հարկի տույժի	9273
10	Ասատուր Վարդանյան	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ. Վարդաբլուր	18297565	Հողի հարկի տույժի	35360
11	Հորիզոն Խառատյան	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ.Գյուլագարակ	18269743	Հողի հարկի տույժի	31421
12	Դոխոլյան Եքսիմ	Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ.Գյուլագարակ	S0371175	Գույքահարկի	88674

Ընդամենը՝ 549976 /հինգ հարյուր քառասունինը հազար հինգ հարյուր յոթանասունվեց/ ՀՀ դրամ:

Հավելված թիվ 02
Գյուլագարակ համայնքի ավագանու
2021թ. դեկտեմբերի 28 -ի թիվ 80-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂԻ

Ծածկագիր	Ազգանուն անուն	հարկ
SE372A5823	Դոխոյան Եքսիմ	35883

Աշխատակազմի քարտուղար / Թ.Գրիգորյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«28» դեկտեմբերի 2021 թ. Թիվ 81-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում 2022թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ	*կողմ* (6)	*դեմ* (0)	*ձեռնպահ* (0)
Գյուլզադյան Վռամ		–	–
Թորոսյան Հրայր	–	–	–
Լալազարյան Կարեն		–	–
Հարությունյան Հայկ	–	–	–
Մագթաղյան Գնել	–	–	–
Մարիկյան Արմեն		–	–
Մկրտումյան Խալաթ	–	–	–
Մուրադյան Դավիթ		–	–
Նալբանդյան Վահե		–	–
Սարգսյան Աիդա		–	–
Օհանյան Ստեփան		–	–

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ /ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գյուլագարակ համայնքի ավագանու
2021թվականի դեկտեմբերի -23-ի թիվ 81Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **յոթ հազար հինգ հարյուր դրամ**,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ ,**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **քսանհինգ հազար դրամ**
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **քսանհինգ հազար դրամ**
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ**.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ**,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երկու հազար հինգ հարյուր** դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ**,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի

ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **հինգ հազար դրամ.**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հազար դրամ,**

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **տասնութ հազար դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ,**

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար երեք հարյուր դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **չորս հազար հինգ հարյուր դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար վեց հարյուր դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **տասներկու հազար դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քառասուն հազար դրամ.**

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար երեք հարյուր դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **չորս հազար հինգ հարյուր դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար վեց հարյուր դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասներկու հազար դրամ.**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քառասուն հազար դրամ.**

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ **հարյուր յոթանասունհինգ դրամ՝** մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **երեսուն հազար դրամ**,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **հիսուն հազար դրամ**,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **երեք հարյուր հազար դրամ**,

դ. խաղատների համար **յոթ հարյուր հազար դրամ,**

ե. շահումով խաղերի համար՝ **երեք հարյուր հազար դրամ**,

զ. վիճակախաղերի համար՝ **մեկ հարյուր հազար դրամ**.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար վեց հարյուր դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հազար հարյուր դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **չորս հազար վեց հարյուր դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **վեց հազար հարյուր դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **ինը հազար հարյուր դրամ.**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար հարյուր դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **չորս հազար հարյուր դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **ութ հազար հարյուր դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնհինգ հազար հարյուր դրամ.**

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **մեկ հազար դրամ**,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար **մեկ հազար յոթ հարյուր հիսուն դրամ**

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **չորս հարյուր հիսուն դրամ**,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երեսուն հազար դրամ**.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **հինգ հազար դրամ**.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **մեկ հարյուր հիսուն հազար դրամ**.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **հինգ միլիոն դրամ,**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **յոթ միլիոն դրամ**,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **տասը միլիոն դրամ**

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման **վճար տասը հազար դրամ.**

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման **վճար հինգ հազար դրամ.**

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **հինգ հազար դրամ.**

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման **վճար զրո դրամ**.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **հինգ հազար դրամ**.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **զրո դրամ**.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել.

ա) կենցաղային աղբի համար՝

- ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ **ամսական հիսուն դրամ**

-պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար **1քառակուսի մետր տարածքի համար 3դրամ**

-պետական առևտրային կազմակերպությունների համար 1քառակուսի մետր տարածքի համար **10դրամ**

- ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի ՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար զրո դրամ:

բ) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **մեկ հազար դրամ**

- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ **հինգ հազար դրամ**

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանել.

ա) կենցաղային աղբի համար՝

- ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հիսուն դրամ

-պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար 1քառակուսի մետր տարածքի համար **3դրամ**

-պետական առևտրային կազմակերպությունների համար 1քառակուսի մետր տարածքի համար **10դրամ**

- ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհաուր մակերեսի ՝ մեկ քառակուսի մետր մակերեսի **համար 0 դրամ:**

բ) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **մեկ հազար դրամ**

- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ **հինգ հազար դրամ**

9) կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

10) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես **<u>ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝</u>** համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային

ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

11) ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

12) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

13) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափ սահմանել երկու հազար դրամ:

14) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով 1500- 2000 դրամ

15) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

16) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով. **0 դրամ**

17) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում հաստատում է համայնքի ավագանին. **0 դրամ**

18) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **մեկ հազար դրամ** փոխհատուցման վճար.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«28» դեկտեմբերի - ի 2021 թվականի N 82-Ն

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1/Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2021թ. տարեկան բյուջեի նախագիծը համաձայն հավելվածի:

2/Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թ. հունվարի 1-ից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Գյուլզադյան Վռամ		—	—	—
Թորոսյան Հրայր	—	—	—	բացակա
Լալազարյան Կարեն		—	—	—
Հարությունյան Հայկ	—	—	—	բացակա
Մագթաղյան Գնել	—	—	—	բացակա
Մարիկյան Արմեն		—	—	—
Մկրտումյան Խալաթ	—	—	—	բացակա
Մուրադյան Դավիթ		—	—	—
Նալբանդյան Վահե		—	—	—
Սարգսյան Աիդա		—	—	—
Օհանյան Ստեփան	—	—	—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ /Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/